Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-798[1]-29.05.2015-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 23 ՀՕ-22 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ժ» ենթակետով.

«ժ) բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եւ տեսակային կազմին ներկայացվող պահանջների սահմանում:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «է» ենթակետով.

«է) ապահովել բնակավայրերի կանաչ գոտիներում բուսական աշխարհի օբյեկտների պաշտպանությունը, դրանց ծավալների (քանակի) ավելացման եւ տեսակային կազմի պահպանության նպատակով:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «ե» ենթակետով.

«ե) Բնակավայրերում կանաչ գոտիների չափերին եւ տեսակային կազմին ներկայացված պահանջների խախտումը:»:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 1-ին հոդվածի դրությները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա: